է մի փոքր յեկեղեցի Պողոս—Պետրոս անունով. յերկու առաքյալների բարձրաքանդակները զարդարում են դրան աջ և ձախ կողմերը և համեմատաբար մի այնպիսի գեղեցկությամբ, որ քիչ է պատահում հայ պատկերաքանդակների մեջ (պատկ. 25). հավանորեն այդ քանդակներով էլ որոշված է յեկեղեցու անունը։ Դրան կամարակալ քարի վերա դեղագրով դրոշմված է յեղել Վասակի արձանագրությունը. հետոյ միայն մի մասը փորագրված է, մնացածն այդ պատճառով էլ յեղծված և միայն հատ հատ տառեր նշմարելի. կարդացվում է այսչափ.

Թվ. Հ. ՁԺԹ։ առաջնորդութի (s!) Երեմիայի ես Վասակ թոռն Ղաղբակայ որդի Գրգրոյ ի նեղ ... ժամանակ ...*

Հավանական է, որ շինության արձանագրությունն է այս. շինողն էլ Գրիգորի որդի Վասակն է, բայց պնդել կարող չենք. ուրիշ վոր և է արձանագրության հետք այս յեկեղեցու վրա նկատելի չէ։ Ցերեմիայի առաջնորդության մասին հիշատակություն ունինք և ուրիշ աղբյուրից. Վարդան վարդապետ յուր Դանիելի մեկնության հիշատակարանի մեջ գրում է հետևյալը. «Եւ սկսաք ի ՁԺՁ թու. ի սբ Վիրապին. և կատարեցաւ ի ՁԺԷ. առաջի սբ և փառաւոր նահատակիս սբ Ստեփանոսիս ի սբ ուխտս Աղէոց վանիցս, յառաջնորդութեն Երեմինայ (s!) գովելի ասպնջականի և գոհանալի եղբարց»*։

Ցեկեղեցու արևելյան կողմը 1287 թ. կանգնած մի խաչարձանի պատվանդանի արձանագրություն թվագրված է ի միջի այլոց «եւ ի տէրութեէ տեղոյս պարոն Աշոտոյ». թեև ուրիշ ցուցում չունինք, բայց անհավանական չէ, որ «պարոն Աշոտը» Գրիգոր Խաղբակյանի թոռը կամ Վասակ Բ-ի որդին լինի (Հավել. Ա. 12)**։

Սորանով վերջանում է մեր ծանոթությունը Գրիգոր Խաղբակյանի և նորա սերնդի մասին։

Ե.

ՊՈՌՇ ՄԵԾ ԻՇԽԱՆԸ (1223—1284).

Խաղբակյան տոհմի կողմնապետական իշխանության ամենափառավոր շրջանը Վասակի որդի Պռոշի ժամանակն է. յերբ մեռավ Վասակ և յերբ անցավ նորա տեղը Պռոշ, կարող ենք միայն մոտավոր ճշդությամբ վորոշել։ Գանձակի պատերազմի ժամանակ 1222 թվին՝ կենդանի եր դեռ ևս Վասակ, թեև նորա անունը հիշատակված չէ մասնակցողների մեջ, և հավանորեն բացակա յեր ծերության պատճառով. Այրիվանեցին նորա մահը նշանակում է Գանձակի պատերազմից անմիջապես հետո. «փոխեցաւ ի Քրիստոս Վասակ իշխանաց իշխանն և էառ զդրոշայն որդի նորա քաջն Պռոշ»**. Գանձակի պատերազմի համար նշանակելով 1221 թիվը, Վասակի մահվան հաջորդող դեպքը Այրիվանեցու մեջ Ջալալեդդինի արշավանքն է, վոր Ատրպատականի սահմաններում հանդես յեկավ 1222 թվին[1], իսկ Հայաստան արշավեց ըստ Գանձակեցու, Վարդանի և Որբելյանի 1225 թվին[2]. ուրեմն 1223/4 թ. պետք է պատահած լինի Վասակի մահը։ Հորից քիչ առաջ վախճանված եր և յերկրորդ որդին Մկրտիչը. ապա թե վոչ նա ժառանգ կհանդիսանար ԺԳ դարում ընդհանրացած իրավունքի համեմատ և վոչ կրտսեր Պռոշը[1]։ Այրիվանեցու հակիրճ տեղեկությունը դրոշակն առնելու մասին մեզ համար շատ թանգագին է. կողմնապետության կամ սպարապետության նշանն եր այդ խաղաղության և պատերազմի ժամանակ։ Այդպիսի մի յերկրորդ տեղեկություն տեսանք և Մահկանաբերդի իշխանների մասին, որ մի և նույն ժամանակ Տփխիսի քաղաքապետներն էին, ամիրաները կամ շահապները[2]։ Իսկ եր Պռոշյանների զինանշանը. բոլորովին հաստատ հիշատակություն չունինք այդ մասին, բայց անհավանական չէ, որ իրար դեմ կանգնած և շղթայված զույգ առյուծներ լինեին. գուցե և շղթայված առյուծ և յեզ

* Ցերկրորդ տողի «թոռն» բառի ն-ի գլուխը կոտրած. յերրորդ տողի «ղաղբակայ» դեղագրով և միացած ընդգծվածը։ Բաղմակետով նշանակված մասը կարմիր դեղագրով է և յեղծված։

** Այրիվանեցի յեր. 65։

1 Стэнли Лэн—Пуль, Мусульманская Династии. перев. В. Бартольд. СП. 1899. стр. 150.-А. Мюллер (Ист. Ислама. III. 241) Ատրպատականի տիրապետությունը նշանակում է հիջրայի 625 թ., իսկ Վրացիների (և Հայոց) հետ ընդհարումը 626 թ.։

2 Գանձակեցի 211. Վարդան 187. Օրբ. 399։

* Ձեռ. էջմ. № 2049, 359բ. համ. Շողակաթ. յեր. 33։ Նույն հիշատակարանն ունինք և Վարագից պատերազմի ընթացքում բերված և այժմ № 242 Ձ-ում. բայց սկսման թվականն այստեղ տարբեր է, կարծում ենք գրչի սխալ. «Եւ սկսաք ի ՁԺԳ (թե դ) թուիս հայոց ի սբ վիրապիս .....»։

** Տես մեր հոդվածը «Շողակաթ», Ջագավանից ժողովը. յեր. 26։

1 Գոշ Մխիթար. Դատաստանագիրք Հայոց. հրատ. Բաստամեանի. Վաղարշպ. 1880. 300. Համ. մեր հոդվածը Христ. Восток Т. II. вып II. Потомство Тарсаича Орбеляна и Минахатуны. 1913. 225.

2 Ալիշ. Հայապատում. 390։